ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ՎԵՐՋԻՆ (ԸՍՏ 1897 Թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ)

ԱՍՈՅԱՆ Լ. Ա.

XIX դ. վերջին, կապված երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետ, Ռուսական կայսրությունում անցկացվեց իր բնույթով եզակի համընդհանուր մարդահամար, որը հնարավորություն տվեց պատկերացում կազմելու երկրի ողջ, այդ թվում՝ Ելիզավետպոլի նահանգի բնակչության էթնիկ կազմի, դավանական, սոցիալական և այլ հարցե- րի մասին:

Ելիզավետպոլի նահանգը ձևավորվել էր XIX դ. երկրորդ կեսին: 1867 թ. դեկտեմբերի 9-ի՝ Սենատի որոշմամբ նորակազմ նահանգը կազմավորվեց «Երևանի, Թիֆլիսի և Բաքվի նահանգների որոշ մասերից» և բաժանվեց 5 գավառի՝ Ելիզավետպոլի, Ղազախի, Զանգեզուրի, Շուշիի և Նուխիի[1]: Ավելի ուշ՝ 1883 թ. ապրիլի 26-ի հրամանագրով Ելիզավետպոլի նահանգն ընդգրկվեց անդրկովկասյան նահանգների կազմի մեջ և բաժանվեց ութ գավառների. ավելացան Արեշի, Ջևանշիրի ու Ջեբրայիլի գավառները[2], որոնց վարչատարածքային բաժանման սահմաններում էլ XIX դ. վերջին հաշվառվել է բնակչությունը: Ելիզավետպոլի նահանգի բնակչությունը դեռևս 1873 թ. կազմել է 587450 մարդ, 1886 թ.՝ 728251 մարդ (որից 258324-ը՝ հայ), իսկ 1897 թ.՝ 878415 մարդ, այսինքն՝ նահանգի բնակչությունն աճել է XIX դ. գրեթե ողջ ընթացքում: Միայն 1886-1897 թթ. ընթացքում այն աճել էր 150163-ով կամ 20%-ով: Հա- մեմատաբար մեծաթիվ էին թուրք-թաթարները, որոնք «ուշ միջնադարից սկսած՝ հյուսիսից և հարավ-արևելքից ներթափանցեցին Անդրկովկաս: Նրանք ուժով գրավում էին տեղաբնիկների տարածքները և հաստատվում այնտեղ: XVIII-XIX դդ. նաև Ղարաբաղի հայ մելիքների միջև ծագած անհամաձայնություններից օգտվեցին նրանց ցեղապետերը և հանձինս Փանահ խանի ու նրա հետնորդների ջանքերի՝ Հայաստանի «Արևելաց կողմանց» տարածքները՝ հատկապես Ղարաբաղը, լցվեց թուրք-թաթա- րական բազմաթիվ ցեղախմբերով»[3]: Ելիզավետպոլի նահանգի բնակչությունը XIX դ. սկսեց համալրվել նաև ռուս՝ գերազանցապես աղանդավորական ազգաբնակչությամբ, ինչը կատարվում էր Ռուսական կայսրու-

թյան գրված նոր շրջանների յուրացմամբ և ռազմաստրատեգիական պահանջներով:

---

[1] *Центральный государственный архив Российской Федерации (այսուհետև՝ ЦГАРФ), ф. 102, оп. 53, д. 154.*

[2] *ЦГАРФ, ф. 102, оп. 55, д. 164, л. 310.* Նույն հրամանագրում նշվում է, որ «Կովկասը բաժանվում է երկու մասերի՝ Հյուսիսային կովկաս և Անդրկովկաս: …Անդրկովկասը կազմված է Թիֆլիսի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Երևանի և Բաքվի նահանգներից ... »:

[3] **Առաքելյան Գ.,** Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում, Ե., 2003, էջ 87:

Ըստ ՆԳ նախարարության տվյալների՝ այն համալրել էին նույնիսկ Սիբիրի երկաթուղու կառուցմանը մասնակցող աքսորյալները[4]: Ելիզավետպոլի նահանգում հաստատվել էին նաև հրեաներ, գերմանացիներ, պահպանվում էին նահանգի հնագույն բնակիչները՝ ուտիները (Վարդաշենում և Նիջում)[5]:

Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների՝ բնակչության թվով առաջինը Ելիզավետպոլի (162788 մարդ) և հետո Շուշիի (138771 մարդ) ու Զանգեզուրի (137871 մարդ) գավառներն էին, իսկ բնակչության խտությամբ՝ Նուխիի (36,02%), Շուշիի (32,16%), Արեշի (23,77%) գավառները[6]: Քաղաքաբնակ էր բնակչության 10,16%-ը: Ընդ որում, քաղաքաբնակների թվի 36,67%-ը տեղաբաշխված էր Ելիզավետպոլ քաղաքում, 29%-ը՝ Շուշիում, իսկ 27,71%-ը՝ Նուխիում[7]: Գավառաբնակ էր նահան-գի բնակչության 89,84%-ը, որի մեծ մասը տեղաբաշխված էր Զանգեզուրի (գավառաբնակների 17,29%), Ելիզավետպոլի (16,37%) և Շուշիի (14,3%) գավառներում: Գավառաբնակների կազմում այլ պետությունների հպատակների մեջ թվով առանձնանում էին պարսկահպատակները՝ 12676 մարդ կամ գավառաբնակների 1,6%-ը: Ենթադրաբար սրանք համալրում էին վարձու բանվորների շարքերը, որոնց աշխատուժը լայնորեն օգտագործվում էր թե՛ արդյունագործության և թե՛ գյուղատնտեսության մեջ: Այս նահանգում ևս պահպանվում էր տարածաշրջանին բնորոշ սեռատարիքային ընդհանուր օրինաչափությունը. բնակչության թվում գերակշռում էր արական սեռը՝ 54,64% կամ 480012 մարդ: Իգական սեռի թվաքանակը հավասար էր 398403 մարդու կամ ընդհանուր բնակչության 45,35%-ի[8]:

Ելիզավետպոլի նահանգի բնակչությունը, ինչպես վերը ներկայացվեց, բազմազգ էր: 1897 թ. մարդահամարի տվյալներով, տարածաշրջանում ապրում էր 47 էթնիկ խումբ[9], որոնցից քանակապես առավել խոշորներից էին հայերը՝ 292188 մարդ կամ նահանգի բնակչության 33,26%-ը, իսկ առավել փոքրաթիվ՝ հրեաները (185 մարդ) և ասորիները (16 մարդ)[10]:

Անդրկովկասյան տարածաշրջանում Երևանի նահանգից հետո հայերի թվաքանակը երկրորդն էր Ելիզավետպոլի նահանգում՝ մոտ 34%: «Հայությունը Ելիզավետպոլի նահանգի տեղաբնիկ հնագույն ազգությունն էր, որի հիմնական բնօրրաններն էին պատմական Հայաստանի՝ Սյունիք, Արցախ, Ուտիք-Գարդմանք, Ծար-Զանգեզուր և հարակից այլ տարածք-

---

[4] *ЦГАРФ, ф. 102, оп. 55, д. 33, ч. 1.*

[5] **Առաքելյան Գ.,** *նշվ. աշխ.*, էջ 89:

[6] Տե՛ս *Первая всеобщая перепись населения Российской Империи* (այսուհետև՝ ПВПНРИ), вып. 1. Население империи по уездам, СПб., 1896.

[7] Տե՛ս *ПВПНРИ, вып. 2. Население городов империи по ПВПНРИ, СПб., 1897.*

[8] *ПВПНРИ, т. 63, Елизаветпольская губ., СПб., 1904, с. 1;* հաշվարկը մերն է:

[9] Տե՛ս *ПВПНРИ, вып. 7. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков, СПб., 1905.*

[10] *ПВПНРИ, т. 63, Елизаветпольская губерния. Таблица XV. Распределение населения по родному языку, грамотности и возрастным группам,* հաշվարկը մերն է:

ներ ևս»[11]: 1897 թ. տվյալներով, հայերը կազմում էին նահանգի բնակչության 33,26%-ը: Հայերը մեծամասնություն էին կազմում Շուշիի գավառում՝ 53,2% կամ 73953 մարդ: Նրանց թիվը մեծ էր նաև Զանգեզուրի (46,1% կամ 63622 մարդ) և Ղազախի (38,8% կամ 43555 մարդ) գավառներում[12]՝ պատմական հայրենիքի արևելյան հատվածում (տե՛ս աղյուսակ 1):

Ելիզավետպոլի նահանգում քաղաքաբնակ էր հայ բնակչության 11,29%-ը (33009 մարդ), իսկ գավառաբնակ՝ 88,70%-ը (259179 մարդ): Այս հանգամանքը կարելի է բացատրել թերևս խոշոր քաղաքներում առևտրաարդյունաբերական կենտրոնների սակավաթվությամբ: Ողջ նահանգում, ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, եղել է ընդամենը երեք նշանավոր կենտրոն, որտեղ և կուտակվել է քաղաքաբնակ հայերի 92,88%-ը՝ Շուշին (այստեղ էր կենտրոնացել քաղաքաբնակ հայերի 43,68%-ը), Ելիզավետպոլը (36,52%) և Նուխին (12,68%)[13]:

Աղյուսակ 1

Հայ բնակչության բաշխումը Ելիզավետպոլի նահանգում[14]

Գավառներ	Բնակչության թիվը	Հայերի թիվը	%-ային հարաբեր.
Ելիզավետպոլի ք. Ելիզավետպոլ	162788 33625	43040 12055	26,4 35,8
Արեշի ք. Աղդաշ	67277 528	13822 116	20,5 21,9
Ջեբրայիլի ք. Ջեբրայիլ	66360 520	15746 228	23,7 43,8
Ջևանշիրի ք. Թարթար	72719 752	19551 120	26,8 15,9
Զանգեզուրի տ. Գորիս	137871 1450	63622 1082	46,1 74,6
Ղազախի տ. Ղազախ	112074 1769	43555 802	38,8 45,3
Նուխիի ք. Նուխի	120555 24734	18899 4186	15,6 16,9
Շուշիի ք. Շուշի	138771 25881	73953 14420	53,2 55,7
Ընդամենը նահանգում	878415	292188	33,26
այդ թվում և գավառ. կենտրոններում	89259	33009	36,9

Շուշին նահանգական խոշոր կենտրոններից էր, որը, ի տարբերություն մյուս երկու քաղաքների, ավելի լավ էր կառուցապատված: Բացի այդ, քաղաքը նպաստավոր էր առևտրի համար, քանզի գտնվում էր առևտրա-

[11] **Առաքելյան Գ.,** նշվ. աշխ., էջ 87:

[12] Տե՛ս *ПВПНРИ, т. 63, Елизаветпольская губерния. Таблица 1. Состав наличного населения обоего пола,* ***հաշվարկը*** մերն է:

[13] *Населенные места Российской империи в 500 и более жителей с указанием всего наличного в них населения и числа жителей с преобладающим вероисповеданием по данным ПВПНРИ, СПб., 1905.*

[14] Աղյուսակը կազմված է ըստ *ПВПНРИ, т. 63, Елизаветпольская губ., Таблица 1*-ի տվյալների, հաշվարկը մերն է:

կան ճանապարհների խաչմերուկում: Շուշիի բուռն զարգացումը սկսվեց հատկապես XIX դ. վերջին՝ կապված գինեգործության, մետաքսագործության արտադրական աճի և բամբակամշակության ընդլայնման հետ, սակայն քաղաքի առավել ծաղկմանը խոչընդոտում էր հաղորդակցման ուղիներից, մասնավորապես՝ երկաթուղուց հեռու լինելու հանգամանքը:

Հետռեֆորմյան շրջանում արագորեն զարգանում էր նաև Ելիզավետպոլ քաղաքը: Քաղաքի տնտեսական առաջընթացին, բնակչության աճին, նոր առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների առաջացմանը մեծապես նպաստեցին անդրկովկասյան երկաթուղու և նրա սպասարկման կայանների կառուցումը, ինչպես նաև Պարսկաստանի հետ առևտրատընտեսական հարաբերությունները: Հիմնականում մետաքսի առևտրի շնորհիվ զարգացում էր ապրում նաև Նուխին, որի բնակչության հիմնական մասը կազմում էին արհեստավորներն ու վաճառականները[15]: Սակայն հարկ է նշել, որ քաղաքային բնակչության մեծ մասը, առևտրին և արհեստներին զուգահեռ, զբաղվում էր նաև շերամապահությամբ, այգեգործությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ և գյուղատնտեսության այլ ճյուղերով:

Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության 18,38%-ը (53732 մարդ) ապահովված էր ինքնուրույն զբաղմունքով և կերակրում էր 238456 մարդու (ի նկատի ունենք ընտանիքի անդամներին), որից 44013-ը՝ գավառներում (215166 ընտանիքի անդամներով), 9719-ը՝ քաղաքներում՝ (23290 ընտանիքի անդամներով): Նահանգի բնակչության հիմնական զբաղմունքներն էին այգեգործությունն ու բանջարաբուծությունը: Այստեղ մշակվող խաղողն ու ծխախոտն արտահանում էին Թիֆլիս, իսկ մնացած մշակաբույսերը՝ նահանգի այլ գավառներ: Մեծ եկամուտ էր բերում շերամապահությունը, որը, սակայն, մեծապես տուժում էր ներմուծվող մետաքսի քանակից[16]: Ըստ զբաղվածության 1897 թ. մարդահամարի տվյալների՝ հայերը բաշխված էին հետևյալ կերպ. զգալի էր գյուղատնտեսության բնագավառում ընդգրկվածների թիվը՝ 3316-ը զբաղվում էր հողագործությամբ, 2271-ը՝ անասնապահությամբ: Սպասարկման ոլորտում ընդգրկված էր 5319 մարդ, իսկ առևտրի՝ 2418: Վերամշակող արդյունաբերության բնագավառում կար 3134 աշխատող, իսկ պետական ծառայությունում՝ 1083:

Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչությունը, ըստ սեռերի, գրեթե համաչափ էր բաշխված՝ 151638 մարդ, կամ հայ բնակչության 51,89%-ը արական սեռի ներկայացուցիչ էր, 140550-ը կամ 48,10%-ը՝ իգական: Սեռատարիքային բաշխվածության առումով հայ բնակչությանը հատուկ էր այն օրինաչափությունը, որ տարիքի ավելանալուն զուգընթաց նվազում էր տարիքային խմբի անդամների ընդհանուր թվաքանակը: Այսպես, օրինակ, ամենաստվարն էր 1-9 տարեկան տարիքային խումբը՝ 95359 մարդ կամ բնակչության 32,63%-ը: Ապա հետևում էր 10-19 տարեկան-

---

[15] *История Азербайджана в 3-х томах, т. 2, От присоединения Азербайджана к России до Февральской революции 1917 года, Баку, 1958, с. 252.*

[16] *Кавказ, оттиск из "Всемирная история Российского государства". Раздел "История городов", т. 2, СПб., 1866, с. 769.*

ների խումբը, որտեղ գրանցվել էր 53897 մարդ կամ բնակչության 18,44%-ը, իսկ 20-29 տարեկանների խմբում՝ 38990 մարդ կամ հայ բնակչության 13,34%-ը[17]: Այսինքն՝ բնակչության թիվը նվազում էր տարիքային այն խմբերում, որոնք աշխատունակ բնակչության, աշխատուժի ներուժի ցուցանիշն էին և թույլ զարգացած արդյունաբերության հետևանք:

1897 թ. մարդահամարի տվյալներով, Ելիզավետպոլի նահանգում գրրագետ էր (տվյալ դեպքում՝ տառաճանաչ) ընդամենը 1789 մարդ քաղաքներում, 24167-ը՝ գավառներում, որոնց մեծագույն մասը հայ էր: «…Անվիճելի է, որ հայերն Անդրկովկասի ժողովուրդների մեջ առաջնակարգ տեղ են գրավում իրենց ընդունակություններով, գործունեությամբ և դեպի ուսումն ու լուսավորությունն ունեցած իրենց ձգտումներով… հայերը մշտապես համարվել են Արևելքի գործարարները և աշխատողները…»[18]: Այսինքն՝ գրագետ էր նահանգի բնակչության 2,95%-ը: Հայ բնակչության ընդհանուր թվից գրագետ էր ռուսերենից 7364-ը (2960-ը՝ գավառներում, 4404-ը՝ քաղաքներում), այլ լեզուներից՝ 10330-ը (5970-ը՝ գավառներում, 4360-ը՝ քաղաքներում), տարրականից բարձր կրթություն ուներ 1937-ը (376-ը՝ գավառներում, 1561-ը՝ քաղաքներում): Գրագիտության տոկոսը բարձր էր ազնվականների (17,3%), հոգևորականների (36,3%), քաղաքացիների և քաղքենիների (18%) շրջանում և խիստ ցածր՝ գյուղացիության մոտ (2,9%): Հաշվի առնելով, որ բնակչության մեծ մասը գյուղացիությունն էր՝ կարելի է եզրակացնել, որ գրագիտության մակարդակը նահանգում բավական ցածր էր՝ 8,88%:

Աղյուսակ 2

Հայ բնակչության դինամիկան Ելիզավետպոլի նահանգում

	1886 թ.[19]			1897 թ.[20]		
Գավառներ	ար.	իգ.	%	ար.	իգ.	%
Ելիզավետպոլի	19324	16393	29,06	22313	20727	26,4
Արեշի	6714	5564	23,68	7329	6493	20,5
Ջեբրայիլի	6240	5429	24,87	8266	7480	23,7
Ջևանշիրի	8632	7441	29,25	10415	9136	26,8
Ջանգեզուրի	31489	25936	46,31	32027	31595	46,1
Ղազախի	18133	14985	38,93	23725	19830	38,8
Նուխիի	10341	8622	16,20	9861	9038	15,6
Շուշիի	40455	32626	57,88	37702	36251	53,2
ընդամենը	141328	116996	35,43	151638	140550	33,26

Ելիզավետպոլի նահանգում ապրում էր 2921888 հայ, որից ընդամենը 11%-ն էր քաղաքաբնակ: Այս ցուցանիշը խիստ տարբերվում է մյուս

[17] *ПВПНРИ, т. 63, Елизаветпольская губ., Таблица XV. Распределение населения по родному языку, грамотности и возрастным группам,* հաշվարկը մերն է:

[18] **Առաքելյան Գ.,** նշվ. աշխ., էջ 45, տե՛ս **Гагемайстер Ю.,** *Закавказские очерки, СПб., 1845, с. 17-20.*

[19] *Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 года, Тифлис, 1893,* հաշվարկը մերն է:

[20] *ПВПНРИ, т. 63, Елизаветпольская губерния. Таблица XIII. Распределение населения по родному языку,* հաշվարկը մերն է:

հայաբնակ վայրերի տվյալներից, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված էր քաղաքների սակավաթվությամբ:

Այսպիսով, 1897 թ. մարդահամարի տվյալները հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու Ելիզավետպոլի նահանգի բնակչության (այդ թվում՝ հայ) սոցիալ-տնտեսական կացության, զբաղվածության ու կենցաղային առօրյայի մասին և հարուստ նյութ են պարունակում հետագա ուսումնասիրությունների համար: Ըստ այդ նյութերի՝ հայերը մեծաքանակ են եղել նաև Ելիզավետպոլի նահանգում: Նրանք կենտրոնացված էին պատմական Հայաստանի մի հատվածը կազմող Շուշիի և Զանգեզուրի տարածքներում՝ նահանգի հայ բնակչության 47,08%-ը: Հայ էր Գորիս քաղաքի բնակչության 74,6%-ը, իսկ Շուշիի բնակչության՝ 55,7%-ը: 1886-1897 թթ. ընթացքում հայ բնակչությունն ավելացել էր 33864-ով կամ 11,58%-ով (տե՛ս աղյուսակ 2): Հայերը հաջողությամբ զբաղվել են գյուղատնտեսությամբ, առևտրով, արհեստագործությամբ և արդյունաբերությամբ, «որը շատ ձեռնտու էր և՛ իրենց, և՛ երկրի ընդհանուր շահերին»[21], իսկ գրագիտության մակարդակով զիջել են միայն ռուսներին և հրեաներին: Բացի այդ, 1897թ. մարդահամարի նյութերը մեկ անգամ ևս հավաստում են, որ Ելիզավետպոլի նահանգի մի մասը «հայ ժողովրդի մի ստվար հատվածի մշտական հայրենիք-բնօրրանն է [եղել] և հայոց կողմանց անբաժանելի մասը»[22]:

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ ЕЛИЗАВЕТПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ В КОНЦЕ XIX ВЕКА (ПО МАТЕРИАЛАМ ПЕРЕПИСИ 1897 Г.)

АСОЯН Л. А.

Резюме

Материалы Первой всеобщей переписи населения Российской империи позволяют заключить, что в конце XIX века армяне составляли значительную часть населения Елизаветпольской губернии – 33,3%. Армянское население в основном было сосредоточено на территории губерний, составляющих часть исторической родины – в Шуши (53,2%), Зангезуре (46,1%), Горисе (74,6%) и т. д. В конце XIX века численность армянского населения в Елизаветпольской губернии значительно возросла (в 1886-1897 гг. на 11,58%) как за счет естественного, так и механического прироста. Успешно занимаясь сельским хозяйством, кустарными промыслами, ремеслами и торговлей, армяне во многом способствовали экономическому процветанию губернии, а относительно высокий уровень грамотности (у армян – 9%, у магометан – всего 1,8%) – давал армянам возможность поступать на государственную службу и представлять интересы населения на разных административных уровнях.

[21] **Առաքելյան Գ.,** նշվ. աշխ., էջ 45, տե՛ս **Гагемайстер Ю.,** *նշվ. աշխ., էջ 17-20:*
[22] Նույն տեղում, էջ 88: